

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հայեցակարգային փաստաթղթում ամփոփված են ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի մշակման հիմքում դրված հիմնական սկզբունքները, ուղղությունները, նպատակադրումներն ու ակնկալվող արդյունքները:

Փաստաթուղթը մշակվել է՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների և շահագրգիռ մարմինների հետ փոխշահավետ քննարկումների բնականոն ընթացքը: Այս առումով, սույն հայեցակարգային փաստաթուղթը նախատեսված է ինչպես ոլորտի պետական կառավարման մարմինների, միջազգային գործընկեր կազմակերպությունների, մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների, առանձին մասնագետների, այնպես էլ հարկային համակարգի փոփոխություններով հետաքրքրվող քաղաքացիների համար:

Հայեցակարգը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության մասնագետների և Համաշխարհային Բանկի աջակցությամբ ներգրավված փորձագետների կողմից:

ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի հանրային քննարկումներն արդյունավետ ձևով կազմակերպելու նպատակով, այս փաստաթուղթը ԱՄՆ ՄՋԳ հարկային բարեփոխումների ծրագրի աջակցությամբ թարգմանվել է նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով, տպագրվել և տեղաբաշխվել է 500 օրինակով:

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ հարկային օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալ հիմնական հանգամանքներով.

1. ՀՀ հարկային օրենսդրության մաս կազմող հիմնական օրենքներն ընդունվել են շուրջ 18 տարի առաջ, և դրանց ընդունումից մինչև այժմ այդ օրենքներում անընդհատ փոփոխություններ և լրացումներ են կատարվել: Նշյալ օրենսդրական փոփոխությունները, սակայն, կատարվել են ոչ թե նախապես մշակված և տնտեսության երկարաժամկետ զարգացմանն ուղղված ռազմավարության ներքո, այլ ընդամենը ուղղված են եղել կարճաժամկետ և տեղային խնդիրների լուծմանը: Թերևս դա է պատճառը, որ գոյության այդ տարիների ընթացքում հնարավոր չի եղել խուսափել հարկային օրենսդրության հաճախակի փոփոխություններից: Վերջիններս հնարավորություն չեն ընձեռել ձևավորել կայուն և կանխատեսելի հարկային միջավայր, ինչը լրջորեն խոչընդոտում է տնտեսավարող սուբյեկտների ներդրումային և գործարար ակտիվությանը: Այս մասին վկայում են նաև ԱՄՆ ՄՋԳ հարկային բարեփոխումների ծրագրի աջակցությամբ տարբեր ոլորտների ու տարբեր խմբերի հարկ վճարողների շրջանում կատարված սոցիալական հարցման արդյունքները, որոնց համաձայն, հարկ վճարողները հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունները համարում են գործարար միջավայրը վատթարացնող գործոն և հարկային օրենսդրության ու հարկային միջավայրի կայունացման տեսլականը կապում են հարկային օրենսգրքի ներդրման հետ: Այս առումով, ՀՀ ֆինանսների նախարարությունը նախատեսում է, որ հարկային օրենսգրքը լինելու է երկարաժամկետ

հեռանկարի համար նախատեսված և կայուն փատաթուղթ, որը չի ենթարկվելու հաճախակի փոփոխությունների:

2. Մյուս կողմից, հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունների արդյունքում հնարավոր չի եղել մշակել և իրականացնել միասնական սկզբունքների վրա հիմնված հարկային քաղաքականություն: Այս առումով, հարկային օրենսգրքի ընդունումը հնարավորություն կընձեռի մշակել և իրականացնել առավել հավասարակշռված հարկային քաղաքականություն՝ հարկային համակարգում կատարելով այնպիսի հիմնարար փոփոխություններ, որոնք, սակայն, բավական դժվար է կատարել հարկային օրենսդրության ընթացիկ փոփոխությունների շրջանակներում:

3. Հարկային համակարգի ձևավորումից ի վեր հարկային վարչարարությունն ու հարկային մարմնի կողմից կիրառվող՝ հարկ վճարողների սպասարկման ու հսկողության գործիքակազմը շարունակաբար կատարելագործվել է, փոխվել են հարկային մարմնի առջև դրվող խնդիրներն ու նպատակները: Այս առումով, անհրաժեշտ է ունենալ ներկա փուլում մեր երկրում իրականացվող հարկային վարչարարությունը սպասարկող այնպիսի հարկային օրենսդրություն, որը մի կողմից հնարավորություն կընձեռի ամբողջությամբ օգտագործել հարկ վճարողներին բարձր որակի սպասարկման ծառայություններ մատուցելու՝ հարկային մարմնի ներուժը, մյուս կողմից հնարավորություն կընձեռի իրականացնել առավել արդյունավետ հարկային հսկողություն:

4. Մեր երկրի հարկային համակարգն անցել է ձևավորման ու զարգացման՝ ավելի քան երկու տասնամյակ ընդգրկող ժամանակահատված, և թեև այդ ընթացքում առանձին օրենսդրական փոփոխություններով մշտապես լուծվել են հարկային համակարգի կատարելագործման, մրցունակության բարձրացման, ազգային տնտեսության գործարար միջավայրի բարելավման ու պետական բյուջեի համար անհրաժեշտ հարկային եկամուտների ապահովման խնդիրները, այդուհանդերձ համաշխարհային տնտեսության զարգացման ներկա միտումները, նոր մարտահրավերները, տարածաշրջանային զարգացումներն ու տնտեսական միությունների շրջանակներում ընթացող ինտեգրացիոն գործընթացները հարկային հարաբերությունները նորովի կարգավորելու օբյեկտիվ անհրաժեշտություն են առաջացրել: Այս իմաստով, ակնկալվում է, որ հարկային օրենսգրքի ընդունումը կարևոր ներդրում կլինի տնտեսության ակտիվացման, գործարար միջավայրի հետագա բարելավման ու օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահավել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ:

5. Շատ կարևոր է նաև այն, որ հարկային օրենսգրքի առկայությունն ինքնին խոսում է առավել կայացած, կայուն և կանխատեսելի հարկային համակարգի ու հարկային միջավայրի մասին: Հետևաբար, հարկային օրենսգրքի առկայությունը նաև կարևոր ու դրական ազդակ կլինի մեր գործընկեր երկրների, ներդրողների ու միջազգային գործընկեր կազմակերպությունների համար:

6. Անցած 18 տարիների ընթացքում հարկային օրենսդրության մեջ հաճախակի կատարված փոփոխությունների արդյունքում հիմնական հարկատեսակների մասին գործող օրենքները նկատելիորեն խճճվել ու բարդացել են, ստեղծվել են օրենսդրական դրույթների երկիմաստ մեկնաբանությունների ու տարընթերցումների հնարավորություններ: Այս իմաստով, ՀՀ հարկային

օրենսգրքի ընդունումը հնարավորություն կընձեռի նորովի վերախմբագրել և առավել համակարգված, պարզ ու հստակ ձևով ներկայացնել հարկային հարաբերություններ կարգավորող օրենսդրությունը:

7. Հատկանշական է նաև այն, որ մեր երկրում հարկային հարաբերությունները կարգավորվում են տարբեր մակարդակների իրավական ակտերով (ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ ֆինանսների նախարարի հրամաններ և այլն): Արդյունքում, մի կողմից նկատելիորեն բարդացել է հարկային հարաբերություններ կարգավորող օրենսդրությունից օգտվելը, մյուս կողմից հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի այս տարանջատվածությունն ու բազմազանությունը ստեղծել են մի այնպիսի իրավիճակ, երբ միևնույն նշանակությունն ունեցող հասկացությունները տարբեր իրավական ակտերում կիրառվում են տարբեր եզրույթներով, երբ միատեսակ հարկային հարաբերությունները կարգավորվում են տարբեր սկզբունքներով ու կանոններով: Այս առումով, ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ հնարավոր կլինի նկատելիորեն կենտրոնացնել և միօրինակ դարձնել հարկային հարաբերություններ կարգավորող բազմաթիվ իրավական ակտերը, ինչի արդյունքում հարկային օրենսդրությունը կդառնա առավել համակարգված, իսկ դրանից օգտվելը՝ դյուրին: Մասնավորապես, առաջարկվում է հարկային օրենսգրքի շրջանակներում կարգավորել ինչպես հարկ վճարողների հարկային հաշվառման, հարկերի հաշվարկման ու վճարման, հարկ վճարողների սպասարկման ու նրանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացման, հարկային պարտավորությունների ու գերավճարների հաշվառման, այնպես էլ հարկային օրենսգրքի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառության, հարկային հարցերով վարչական վարույթի իրականացման, հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների կիրառության ու հարկային ծառայողների գործողությունների և անգործության բողոքարկման հետ կապված հարաբերությունները:

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հարկային օրենսգրքի նախագիծը բաղկացած է 4 մասերից՝

1) *ընդհանուր մաս*, որի շրջանակներում տրվում է ընդհանուր նշանակության հարկային հարաբերությունների կարգավորումը: Հարկային օրենսգրքի ընդհանուր մասի շրջանակներում կարգավորվել են ներկայումս չկարգավորված ավելի քան 70 թեմատիկ հարցեր, որոնք ներկայումս կամ մեկնաբանվում են կամ պարզաբանվում են կամ էլ պարզապես կարգավորված չեն,

2) *հատուկ մաս*, որի շրջանակներում կարգավորվում են առանձին հարկատեսակներին վերաբերող հարաբերությունները: Ի լրումն հայեցակարգով նախատեսվող սկզբունքների շրջանակներում առաջարկվող միջոցառումների, հարկային օրենսգրքի հատուկ մասի շրջանակներում կարգավորվել են ներկայումս չկարգավորված ավելի քան 130 թեմատիկ հարցեր, որոնք ներկայումս կամ մեկնաբանվում են կամ պարզաբանվում են կամ էլ պարզապես կարգավորված չեն,

3) *հարկային վարչարարության մաս*, որի շրջանակներում կարգավորվում են հարկային վարչարարությանը բնորոշ բոլոր հարաբերությունները՝ սկսած հարկ վճարողների ու նրանց հարկային պարտավորությունների հաշվառումից, ներառյալ հարկ վճարողների սպասարկումը, նրանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը, հարկային օրենսգրքի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառությունը և վերջացրած հարկային մարմնի կողմից վարչական վարույթի իրականացմամբ, հարկային ծառայողների գործողությունների ու անգործության բողոքարկմամբ: Հարկային օրենսգրքի ընդհանուր մասի շրջանակներում կարգավորվել են ներկայումս չկարգավորված ավելի քան 40 թեմատիկ հարցեր, որոնք ներկայումս կամ մեկնաբանվում են կամ պարզաբանվում են կամ էլ պարզապես կարգավորված չեն,

4) *եզրափակիչ և անցումային մաս*, որի շրջանակներում կարգավորվում են Օրենսգիրքն ուժի մեջ մտցնելու հետ կապված անցումային հարկային հարաբերությունները:

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարկային օրենսգրքի նախագծի մշակման հիմքում դրված են յուրաքանչյուր հարկատեսակի հարկման բազայի, դրույքաչափերի, հաշվարկման ու վճարման կարգի, ինչպես նաև հարկային վարչարարության գործիքակազմի ուղղությամբ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և ՀՀ ֆինանսների նախարարությունում ձևավորված աշխատանքային խմբերի կողմից իրականացված խորը ու բազմակողմանի վերլուծության արդյունքները: Բացի այդ գնահատվել է հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվող փոփոխությունների ազդեցությունը գործարար միջավայրի, մրցակցային միջավայրի, գնաձային հնարավոր ճնշումների, պետական բյուջեի հարկային եկամուտների մեծության, ինչպես նաև հարկային վարչարարության վրա:

Վերոնշյալ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները, սույն հայեցակարգային փաստաթղթի ձևաչափին ու ծավալին համադրելի չլինելու պատճառով, ներկայացվում են առանձին:

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ հարկային օրենսգրքի նախագիծը մշակվել է հետևյալ հիմնական սկզբունքների հիման վրա.

Սկզբունք 1. քարեփոխումներն իրականացվելու են 3-5 տարիների ընթացքում, որպեսզի հնարավոր լինի հարկային համակարգում ապահովել կայունություն և սահունություն: Հարկային օրենսգրքի ներդրումը համակարգային փոփոխություն է և դրանով իսկ՝ այն իր անդրադարձն է ունենալու ինչպես ամբողջ ազգային տնտեսության, այնպես էլ հասարակության բոլոր խմբերի վրա: Այս իմաստով, հարկային օրենսգրքի շրջանակներում քարեփոխումները, հարկային քաղաքականության ու վարչարարության հիմնական փոփոխություններն իրականացվելու են

աստիճանաբար, որպեսզի մի կողմից հարկային համակարգի փոփոխությունները լինեն սահուն, առանց ցնցումների, իսկ մյուս կողմից տնտեսավարող սուբյեկտներն ու հասարակության առանձին խմբերը բավարար ժամանակ ունենան՝ հարմարվելու համար փոփոխվող հարկային միջավայրին:

Սկզբունք 2. կարևորվում է պետական բյուջեի թե՛ կարճաժամկետ, և թե՛ երկարաժամկետ կայունությունը: Կատարվող բարեփոխումները բոլոր փուլերում ապահովելու են հարկային եկամուտների աճ, իսկ տնտեսության մրցունակության և ներդրումային զրավչության բարձրացման համար հարկային համակարգում հիմնական կշիռը տրվում է սպառման հարկմանը: Հարկային օրենսգրքի ներդրումը թե՛ կարճաժամկետ, և թե՛ երկարաժամկետ հեռանկարում անպայմանորեն պետք է ուղեկցվի ազգային տնտեսության հարկաբյուջետային կայունության մակարդակի բարձրացմամբ: Վերջինս, իր հերթին, ենթադրում է պետական և համայնքային բյուջեների հարկային եկամուտների աճ: Այդ իսկ պատճառով, հարկային օրենսգրքի ընդունմամբ մեծապես կարևորվում է նաև հարկային եկամուտների ներուժի ընդլայնումը և պետական ու համայնքային բյուջեների համար լրացուցիչ հարկային եկամուտների ապահովումը: Վերջինս ՀՀ կառավարությանը հնարավորություն կընձեռի ընդլայնել սոցիալական, առողջապահական, կրթական, բնապահպանական և այլ հանրօգուտ ոլորտներում իրականացվող ծրագրերի շրջանակը, նախաձեռնել նոր՝ առավել հավակնոտ ու առավել ընդգրկուն ծրագրեր, նպաստել տնտեսության ակտիվացման ու երկարաժամկետ զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորմանը: Հարկային եկամուտներն ընդլայնելու համար հարկային օրենսգրքի շրջանակներում, մասնավորապես, առաջարկվում է հետևյալը.

ԱԱՀ-ի գծով.

1) **ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափը թողնել անփոփոխ:** Հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է ԱԱՀ-ի դրույքաչափը պահպանել 20 տոկոսի մակարդակում: Առաջարկությունը հիմնավորվում է նրանով, որ ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցումը ազգային տնտեսությանը որևէ մրցակցային առավելություն չի հաղորդում, քանի որ՝

ա. արտահանումը, միևնույն է, հարկվում է ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով, ինչը նշանակում է, որ ԱԱՀ-ի դրույքաչափի իջեցումը, պետական բյուջեի հարկային եկամուտները զգալիորեն կրճատելով հանդերձ, միևնույն է, արտաքին շուկաներում հայկական արտադրանքի մրցունակությունը որևէ կերպ չի կարող բարձրացնել,

բ. ԱԱՀ-ի դրույքաչափի իջեցմամբ հնարավոր չէ նկատելիորեն իջեցնել գները, և հետևաբար, ընդլայնել սպառումը,

գ. ԱԱՀ-ի դրույքաչափի իջեցումը կարող է նաև բացասաբար ազդել տեղական արտադրությունների զարգացման ու ընդլայնման հնարավորությունների վրա, քանի որ ԱԱՀ-ի համեմատաբար բարձր դրույքաչափը ինչ-որ չափով տեղական արտադրությունները պաշտպանում է ներմուծումից:

Վերոնշյալը համադրվել է ԱԱՀ-ի դրույքաչափի իջեցման արդյունքում ակնկալվող պետական բյուջեի հարկային եկամուտների կորստի հետ (ԱԱՀ-ի դրույքաչափի 2 տոկոսային կետով իջեցումը, այլ հավասար պայմաններում, անխուսափելիորեն հանգեցնելու էր տարեկան կտրվածքով շուրջ 44 մլրդ. դրամ հարկային եկամուտների կորստի), և որոշվել է պահպանել ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափը, հակառակ պարագայում այլևս հնարավոր չէր լինի իրագործել հարկային օրենսգրքի նախագծով ԱԱՀ-ի գծով առաջարկվող բարեփոխումները:

2) կրճատել ԱԱՀ-ից ազատման արտոնությունների շրջանակը: Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ից ազատված ոլորտների և (կամ) գործարքների շրջանակը չափազանց լայն է: Բացի այդ, խնդիրը կայանում է նրանում, որ ԱԱՀ-ից ազատման արտոնությունները հիմնականում պետք է նախատեսված լինեն հասարակության սոցիալապես անապահով խմբերի համար: Գործնականում, սակայն, ԱԱՀ-ից ազատման արտոնություններից օգտվում են ինչպես հասարակության սոցիալապես անապահով խմբերը, այնպես էլ բարձր եկամուտներ ունեցող խմբերը և վերջիններս՝ թերևս անհամեմատ ավելի մեծ չափով, քանի որ նրանք ավելի շատ են սպառում ԱԱՀ-ից ազատված ապրանքներ և ծառայություններ: Այս առումով, ԱԱՀ-ից ազատման արտոնությունները կորցնում են իրենց հասցեականությունը և հիմնական նպատակին չեն ծառայում: Հաշվի առնելով նշյալ հանգամանքները՝ հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է կրճատել ԱԱՀ-ից ազատման արտոնությունների շրջանակը և փոխարենը հասարակության սոցիալապես անապահով խմբերին աջակցել պետական բյուջեից հասցեական ձևով տրամադրվող սուբսիդիաների ծավալի մեծացման միջոցով՝ դրանով իսկ պետության աջակցությունը դարձնելով առավել թիրախային ու արդյունավետ: Մասնավորապես, հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է ԱԱՀ-ով հարկել՝

ա. բժշկական պարագաների և տեխնիկայի օտարումը, բուժօգնության և բուժսպասարկման (այդ թվում՝ կանխարգելիչ և ախտորոշման) ծառայությունների մատուցումը՝ 2018 թվականի հունվարի 1-ից:

բ. բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը՝ 2019 թվականի հունվարի 1-ից:

գ. գյուղատնտեսական արտադրանք արտադրողների կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումը: Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտում, մասնավորապես, հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է՝

➤ գերփոքր գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին (որոնք գործնականում չունեն ապրանքային արտադրություն և գյուղատնտեսական արտադրանքն արտադրում են սեփական սպառման համար) շարունակել ազատել հարկերից,

➤ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին, որոնք չեն գերազանցում ԱԱՀ-ի շեմը, 2020 թվականի հունվարի 1-ից տեղափոխել շրջանառության հարկի համակարգ,

➤ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող խոշոր տնտեսավարող սուբյեկտների հարկումն իրականացնել հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում՝ ԱԱՀ-ով և շահութահարկով:

դ. դիզելային վառելիքի ներմուծումը և օտարումը:

ե. այլ ոլորտներ և (կամ) գործարքներ, որոնց մասով ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության՝ նախորդ տարիների փորձի ուսումնասիրության արդյունքներով այդ արտոնությունների կիրառությունը չի հիմնավորվում ծախսեր-օգուտներ վերլուծությամբ:

Ակցիզային հարկի գծով.

1) աստիճանաբար բարձրացնել ակցիզային հարկի դրույքաչափերը: Հարկային օրենսգրքի շրջանակներում չափազանց կարևորվում է ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացումը, քանի որ՝

ա. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ակցիզային հարկի դրույքաչափերը մի քանի անգամ ցածր են ինչպես եվրոպական երկրներում (այդ թվում՝ արևելաեվրոպական երկրներում), այնպես էլ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում կիրառվող համապատասխան դրույքաչափերի համեմատությամբ:

բ. ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացումը դիտվում է լրացուցիչ հարկային եկամուտներ գեներացնող հիմնական աղբյուրը, ինչը հնարավորություն կընձեռի փոխհատուցել եկամտային հարկի դրույքաչափի իջեցման, ինչպես նաև հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվող՝ տնտեսական աշխուժացմանն ուղղված այլ բարեփոխումների արդյունքում առաջացող հարկային եկամուտների կորուստը: Մասնավորապես, առաջարկվում է՝

➤ Եվրասիական տնտեսական միությունում իրականացվող՝ ակցիզային հարկի դրույքաչափերի ներդաշնակեցման քաղաքականության ներքո՝ մինչև 2020 թվականը, շարունակաբար բարձրացնել ծխախոտի արտադրանքի և ալկոհոլային խմիչքների համար նախատեսված ակցիզային հարկի դրույքաչափերը:

➤ բարձրացնել բենզինի և դիզելային վառելիքի համար նախատեսված ակցիզային հարկի դրույքաչափերը:

2) ընդլայնել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների շրջանակը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների շրջանակը համեմատաբար ավելի նեղ է: Այս առումով, հարկային օրենսգրքի ներդրմամբ խնդիր է դրվել որոշակիորեն ընդլայնել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների շրջանակը և որպես ակցիզային հարկով հարկման ենթակա նոր ապրանքներ՝ ընտրվել են սուրճը, օժանելիքը և սեղմված բնական գազը, քանի որ միջազգային պրակտիկայում ավելի շատ երկրներ են այս ապրանքների սպառումը հարկում ակցիզային հարկով:

Բնապահպանական ու ձանապարհային հարկերի և բնօգտագործման վճարի գծով.

1) աստիճանաբար բարձրացնել բնապահպանական հարկի, ճանապարհային հարկի, բնօգտագործման վճարի դրույքաչափերը: Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող բնապահպանական ու ճանապարհային հարկերի (ներկայումս՝ վճարների), ինչպես նաև բնօգտագործման վճարների դրույքաչափերը նկատելիորեն ցածր են այլ երկրներում (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ համարվող երկրներում) կիրառվող համապատասխան դրույքաչափերի համեմատությամբ: Հաշվի առնելով նշյալ հանգամանքը, ինչպես նաև այն, որ հարկային օրենսգիրքն ուժի մեջ է մտնելու 2018 թվականի հունվարի 1-ից և կարճաժամկետ հեռանկարում փոփոխությունների չի ենթարկվելու՝ առաջարկվում է 2018-2020 թվականների ընթացքում 30-ից 50 տոկոսով բարձրացնել Հայաստանի Հանրապետությունում կիրառվող բնապահպանական ու ճանապարհային հարկերի, ինչպես նաև ոչ մետաղական օգտակար հանածոների համար նախատեսված բնօգտագործման վճարների դրույքաչափերը:

Գույքային հարկերի գծով.

1) գույքային միավորների և հողերի կադաստրային արժեքները մոտեցնել դրանց շուկայական արժեքներին: Դեռևս 2010-2011 թվականների ընթացքում կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ մեր երկրում գույքային միավորների և հողերի կադաստրային արժեքները՝ որպես հարկման բազաներ, անհամեմատ ցածր են, քան դրանց շուկայական արժեքները: Միջազգային պրակտիկայում, սակայն, գույքային հարկերի համար հարկման բազան համարվում է այդ գույքային միավորների ու հողերի շուկայական արժեքը կամ դրանց մոտարկված կադաստրային արժեքը: Այս առումով, հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է պահպանել գույքային հարկերի դրույքաչափերն ու արտոնությունների շրջանակը՝ միաժամանակ գույքային միավորների ու հողերի կադաստրային արժեքները աստիճանաբար մոտարկել դրանց համապատասխան շուկայական արժեքներին.

2) կատարելագործել գույքային հարկերի համակարգը և պարզեցնել գույքային հարկերի ոլորտում իրականացվող վարչարարությունը: Մասնավորապես, հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է՝

➤ վերացնել կազմակերպությունների կողմից գույքահարկի և հողի հարկի հաշվարկների ներկայացման պահանջը և սահմանել, որ կազմակերպությունների փոխարեն գույքային հարկերը հաշվարկվում են համայնքները ու հարկային պարտավորության մասին ծանուցում են հարկ վճարողներին՝ դրանով իսկ կազմակերպությունների մասով գույքային հարկերի համակարգը համապատասխանեցնելով ֆիզիկական անձանց մասով կիրառվող համակարգին,

➤ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց համար գույքահարկի և հողի հարկի վճարման պարբերականությունը կիսմայակայինից դարձնել տարեկան,

➤ անշարժ գույքի հարկը հաշվարկել որպես անշարժ գույք հանդիսացող հողամասերի և շինությունների նկատմամբ սահմանված դրույքաչափերով հաշվարկված հարկի գումարների հանրագումար:

Պետական բյուջեի հարկային եկամուտների վրա հարկային օրենսգրքի ներդրման ազդեցությունը՝ ըստ յուրաքանչյուր ուղղությամբ իրականացվող միջոցառումների և ըստ տարիների, ներկայացված է սույն հայեցակարգային փաստաթղթի հավելվածում:

Սկզբունք 3. կարևորվում է տնտեսության երկարաժամկետ աճը՝ չկենտրոնանալով կարճաժամկետ արդյունքների վրա: Հարկային համակարգերի ձևավորման ու զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությամբ հիմնավորվում է, որ հատկապես զարգացող երկրներում ազգային տնտեսության մրցունակությունն ու ներդրումային գրավչությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է հիմնական շեշտադրումը կատարել սպառման հարկման վրա, իսկ տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համար սահմանել հնարավորին չափ ցածր հարկային բեռ: Քաղաքականության այս ուղղության ներքո՝ հարկային օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում, կարևոր ուշադրություն է հատկացվել այնպիսի հարկային խթանների ներդրման վրա, որոնք թեև կարճաժամկետ հեռանկարում կհանգեցնեն հարկային եկամուտների որոշակի կորստի, այդուհանդերձ երկարաժամկետ հեռանկարում կարևոր ներդրում կլինեն տնտեսության զարգացման և կայուն տնտեսական աճի ապահովման գործում: Այս իմաստով, հարկային օրենսգրքի նախագիծը մշակվել է՝ հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ հարկային քաղաքականության փոփոխությունները ոչ միայն չպետք է հակադրվեն երկրի գործարար միջավայրի բարելավման ու ազգային տնտեսության ներդրումային գրավչության բարձրացման, տարածաշրջանում հայաստանյան հարկային համակարգի մրցունակության ամրապնդման և երկրում երկարաժամկետ ու կայուն տնտեսական աճ ապահովելու հիմնական նպատակադրումներին, այլ նաև պետք է ուղղակիորեն կողմնորոշված լինեն այդ նպատակադրումների իրագործմանը: Մասնավորապես, հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է հետևյալը.

ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով.

1) փուլ առ փուլ ընդլայնել այն ապրանքների շրջանակը, որոնց ներմուծման դեպքում ԱԱՀ-ն վճարվում է ոչ թե սահմանին, այլ ներմուծումից հետո՝ դրանով իսկ Եվրասիական տնտեսական միության անդամ չհամարվող պետություններից կատարվող ներմուծումների մասով ԱԱՀ-ի վճարման համակարգը մոտարկելով Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից կատարվող ներմուծումների մասով ԱԱՀ-ի վճարման համակարգին: Ներմուծման մասով ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգման հնարավորությունների ընդլայնումը նախատեսված է նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրով: Այս փոփոխությունը շատ կարևոր է հատկապես ներդրումային փուլում գտնվող հարկ վճարողների համար, ինչը նկատելիորեն կհեշտացնի նրանց կողմից նոր մեքենասարքավորումների, տեխնոլոգիական լուծումների ներմուծման և արտադրությունների տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացման խնդիրների լուծումը: Նախատեսվում է, որ հարկային օրենսգրքի ներդրման սկզբնական փուլում կհետաձգվեն մեքենաների և սարքավորումների ներմուծման մասով ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետները, իսկ

այնուհետև այդպիսի հնարավորություն կստեղծվի նաև հումքի, նյութերի ու կիսապատրաստուկների ներմուծման գծով.

2) հիմնարար ձևով ազատականացնել ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով հաշվանցումների կատարման համակարգը՝ վերացնելով տնտեսագիտորեն չհիմնավորված սահմանափակումները և նպատակ ունենալով հարկ վճարողներին չժանրաբեռնել ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով չհիմնավորված պարտավորություններով: Հարկային համակարգի ձևավորման սկզբնական շրջանում հարկային օրենսդրության մեջ ներդրվել են ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով հաշվանցումներ կատարելու բազմաթիվ սահմանափակումներ, որոնք նպատակ են ունեցել օժանդակել հարկային վարչարարության իրականացմանն ու հարկային եկամուտների հավաքագրմանը: Ներկայումս, երբ հարկային համակարգը գտնվում է զարգացման անհամեմատ ավելի բարձր մակարդակում, հարկային վարչարարությունը պետք է իրականացվի ոչ թե տնտեսագիտական հիմնավորում չունեցող նման սահմանափակումների կիրառությամբ, այլ առավել առաջադեմ ու առավել հասցեական գործիքների կիրառությամբ: Այս առումով, ՀՀ կառավարությունը մինչև հարկային օրենսգրքի ընդունումը արդեն իսկ սկսել է առանձին օրենսդրական փոփոխություններով ազատականացնել ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարման համակարգը: Մասնավորապես, 2015 թվականից սկսած՝ տարեկան կտրվածքով մինչև 100 մլն. դրամ շրջանառություն ունեցող ԱԱՀ վճարողները, որոնք ընդգրկում են ԱԱՀ վճարողների ճնշող մեծամասնությանը, ԱԱՀ-ի գծով հաշվանցումները կատարում են անկախ իրենց մատակարարներին վճարում կատարած լինելու հանգամանքից: Նույն օրենսդրական փոփոխությամբ արդեն իսկ նախատեսվում է, որ մինչև հարկային օրենսգրքի ներդրումը այդ հնարավորությունն ունենալու են բոլոր ԱԱՀ վճարողները՝ առանց իրացման շրջանառության սահմանափակման: Հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է հետևողականորեն շարունակել քաղաքականության այս ուղղությունը և էլ ավելի ազատականացնել ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով հաշվանցումներ կատարելու համակարգը, քանի որ քաղաքականության այս ուղղությունը հարկ վճարողներին հնարավորություն է ընձեռում իրենց տրամադրության տակ եղած շրջանառու ֆինանսական միջոցներն օգտագործել առավել արդյունավետ ձևով: Այս փոփոխություններն իրականացնելու անհրաժեշտության մասին տարիներ շարունակ խոսվել է, սակայն այդ ուղղությամբ օրենսդրական փոփոխություններ չեն կատարվել, քանի որ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա դրանց բացասական ազդեցությունը շատ մեծ է: Ներկայումս, քանի որ հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում են համալիր միջոցառումներ, որոնց իրականացման արդյունքում ակնկալվող լրացուցիչ հարկային եկամուտները հնարավորություն կընձեռել բարեփոխումների իրականացնել, հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է վերացնել՝

ա. անուղղակի հարկերի հաշվարկներով առաջացող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարները միայն առաջիկա հաշվետու ժամանակաշրջաններում ձևավորվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով հարկային պարտավորությունների մարմանն ուղղելու սահմանափակումը և հարկ վճարողներին (հատկապես ներդրումային փուլում գտնվող) հնարավորություն ընձեռել հետ ստանալ 6 ամսվա

կտրվածքով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով կուտակված պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարները կամ դրանք ուղղել այլ հարկային պարտավորությունների մարմանը (առաջարկվող փոփոխությունը վերաբերում է ոչ միայն արտահանման գործարքներին վերագրվող ձեռքբերումների մասով առաջացող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարներին, այլ ընդհանրապես կատարվող ձեռքբերումների մասով առաջացող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարներին, որոնք գործող օրենսդրության պայմաններում հարկ վճարողները իրավունք չունեն հետ ստանալ կամ ուղղել այլ հարկային պարտավորությունների մարմանը): Այս փոփոխությունը տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն կընձեռի տնտեսել շրջանառու ֆինանսական միջոցներ և դրանք նույնպես ուղղել տնտեսական իրենց գործունեությանը.

բ. գործարքի իրականացման արդյունքում առաջացող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի պարտավորության ու ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հաշվանցվող գումարի միջև առաջացող բացասական տարբերությունը չհաշվանցելու սահմանափակումը: Վերջինս, թերևս, տնտեսագիտորեն ամենից չհիմնավորված սահմանափակումն է, որի կիրառությունը, ըստ էության, նշանակում է ներմուծվող ապրանքների գծով կիրառվող մաքսատուրքի դրույքաչափի բարձրացում, ինչը ընդունելի չէ: Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ այս սահմանափակման վերացումը ենթադրում է որոշակի ռիսկերի առաջացում՝ սահմանափակման վերացմանը զուգահեռ պետք է իրականացվեն այդ ռիսկերի կառավարմանն ուղղված միջոցառումներ.

գ. ոչ իրացման նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների (բացառությամբ թեթև մարդատար ավտոմեքենաների) գծով հաշվանցումներ կատարելու սահմանափակումը.

3) բարելավել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկ վճարողների հետ իրականացվող արտահանման ու ներմուծման գործարքների մասով ԱԱՀ-ի և ակցիզային գծով պարտավորությունների առաջացման և հաշվանցումների կատարման պայմանները: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը, հարկային օրենսգրքի շրջանակներում խնդիր է դրվել բարելավել միության անդամ պետությունների հարկ վճարողների հետ իրականացվող գործարքների գծով հարկային հաշվառման պայմանները: Մասնավորապես, առաջարկվում է հարկային օրենսգրքով նախատեսել, որ՝

ա. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից կատարվող ներմուծումների մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հաշվանցումները կատարվում են ներմուծման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով նաև այն դեպքում, եթե ներմուծման մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի վճարումը կատարվել է մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանի համար անուղղակի հարկերի հաշվարկի ներկայացումը՝ գործնականում երկարացնելով ներմուծման մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի վճարման ժամկետները.

բ. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ կատարվող արտահանումների դեպքում արտահանման փաստը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորությունների նկատմամբ տույժերը հաշվարկվում են ոչ թե ներմուծման օրվանից, այլ դրան հաջորդող 180-րդ օրը լրանալուց հետո:

Շահութահարկի գծով.

1) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ստացած շահաբաժիններն ազատել շահութահարկով հարկումից: Այս փոփոխությունը թեև կարճաժամկետ հեռանկարում կհանգեցնի պետական բյուջեի հարկային եկամուտների որոշակի կորստի, այդուհանդերձ երկարաժամկետ հեռանկարում կապահովի ինչպես տնտեսության ակտիվացում, այնպես էլ լրացուցիչ հարկային եկամուտներ, քանի որ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ստացած շահաբաժինների՝ շահութահարկով հարկումից ազատումը նկատելիորեն կբարելավի մեր երկրի ներդրումային գրավչությունը: Այս առումով, ՀՀ հարկային համակարգը, օտարերկրյա երկարաժամկետ ներդրումներ ներգրավելու տեսանկյունից, առնվազն տարածաշրջանում մշտապես մրցունակ լինելու խնդիր ունի, և այդ խնդրի լուծումը խիստ կարևոր է երկրի երկարաժամկետ ու կայուն զարգացման տեսանկյունից.

2) ազատականացնել շահութահարկի կանխավճարների հաշվարկման համակարգը: Այս փոփոխության շրջանակներում նախատեսվում է հարկ վճարողներին հնարավորություն ընձեռել կամավորության հիմունքներով ընտրել կանխավճարների հաշվարկման այլընտրանքային եղանակ՝ հիմնված նախորդ եռամսյակի իրացման շրջանառության 2 տոկոսի վրա, ինչը ընթացիկ տարում ցածր շահութաբերությամբ աշխատող հարկ վճարողներին հնարավորություն կընձեռի կանխավճարները հաշվարկել ավելի ձկուն ձևով: Բացի այդ, նախագծով առաջարկվում է սահմանել, որ հարկման այլընտրանքային համակարգերի շրջանակներում իրականացվող գործունեության արդյունքներն այլևս չեն մասնակցելու շահութահարկի կանխավճարների մեծության հաշվարկմանը, ինչը բացի կանխավճարների գծով բեռի թեթևացումը, էապես կպարզեցնի նաև կանխավճարների հաշվարկման կանոնները.

3) վերացնել հարկման նպատակով նորմավորվող որոշ ծախսերի նորմաները: Հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է վերացնել ապրանքների արտահանման, ինչպես նաև կադրային ներուժի շարունակական զարգացման նպատակով կատարվող այնպիսի ծախսերի սահմանափակումները, ինչպիսիք են արտերկրում կատարվող գովազդի ու մարկետինգի ծախսերը, ինչպես նաև կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսերը.

4) անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների համար սահմանել ձեռնարկատիրական եկամտի (շահույթի) հարկման հավասար դրույթաչափեր: Հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների համար, անկախ ընտրված կազմակերպատիրավական տեսակից, սահմանել հարկման միատեսակ պայմաններ՝ անհատ ձեռնարկատերերի ձեռնարկատիրական եկամուտը (շահույթը) հարկելով շահութահարկի համակարգի շրջանակներում՝ կազմակերպությունների համար նախատեսված՝ 20 տոկոս դրույթաչափով.

5) արմատապես պարզեցնել հիմնական միջոցների վրա կատարվող ծախսերի հաշվառման կանոնները: Մասնավորապես, հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է ներդնել հիմնական միջոցների վրա կատարվող ծախսերն ըստ ընթացիկ, կապիտալ և սպասարկման բնույթի դասակարգելու և այդ ծախսերը հարկման նպատակով հաշվառելու դյուրին համակարգ.

6) պարզեցնել ամորտիզացիոն մասհանումների հաշվարկման ու կատարման համակարգը:

Մասնավորապես, հարկային օրենսգրքով առաջարկվում է սահմանել, որ ամորտիզացիոն մասհանումների հաշվարկման հիմնական մոտեցումը պետք է լինի գծային մեթոդը՝ զուգահեռաբար պահպանելով ամորտիզացիոն մասհանումների հաշվարկման համակարգի այն դրական կողմերը, որոնցով բնութագրվում է ամորտիզացիոն մասհանումների հաշվարկման խմբային (փուլինգային) մեթոդը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հարկման նպատակով ամորտիզացիոն մասհանումների հաշվարկումը հիմնական միջոցի փաստացի շահագործման մեջ գտնվելու հանգամանքի հետ չկապելուն: Միաժամանակ, նախագծով առաջարկվում է հարկման նպատակով ամորտիզացիոն մասհանումների հաշվարկման նվազագույն ժամկետները հնարավորին չափ մոտարկել համապատասխան հիմնական միջոցների տնտեսական կյանքի տևողության հետ՝ կազմակերպությունների մոտ անհարկի հարկային վնասների ձևավորումը կանխարգելելու նպատակով:

Եկամտային հարկի գծով.

3) նվազեցնել եկամտային հարկի դրույքաչափերը՝ սահմանելով միասնական՝ 20 տոկոս դրույքաչափ: Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձից հաշվարկվող հարկային բեռը համեմատաբար բարձր է: Այս հանգամանքը նկատելիորեն խոչընդոտում է ազգային տնտեսության մրցունակությանը և բացի այդ, խրախուսում է աշխատավարձի թերհայտարարագրումը: Մյուս կողմից, թեև ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համար ներկայումս սահմանված է դրույքաչափերի պրոգրեսիվ սանդղակ, այդուհանդերձ, հարկման համակարգն, ըստ էության, այնքան էլ պրոգրեսիվ չէ, քանի որ՝

ա. գործնականում կիրառվում են սանդղակի առաջին երկու մակարդակների դրույքաչափերը, իսկ երրորդ մակարդակի դրույքաչափի կիրառության շրջանակը շատ նեղ է,

բ. սանդղակի առաջին երկու մակարդակների դրույքաչափերի միջև տարբերությունն աննշան է, ի տարբերություն երկրորդ և երրորդ մակարդակների դրույքաչափերի միջև առկա մեծ տարբերության:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է եկամտային հարկի ներկայիս եռաստիճան դրույքաչափերի համակցության փոխարեն սահմանել միասնական 20 տոկոս դրույքաչափ: Եկամտային հարկի գծով բարեփոխումը, սակայն, հնարավոր կլինի իրականացնել միայն անուղղակի հարկերի գծով սույն հայեցակարգով առաջարկվող միջոցառումների իրականացման պարագայում, քանի որ եկամտային հարկի դրույքաչափերի իջեցման արդյունքում պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստը տարեկան կտրվածքով գնահատվում է շուրջ 50 մլրդ. դրամի չափով:

Եկամտային հարկի դրույքաչափի իջեցումը շատ կարևոր է, քանի որ այն կնպաստի՝

ա. ֆիզիկական անձանց տնօրինվող եկամուտների աճին, հետևաբար նաև՝ սպառման ընդլայնմանը,

բ. աղքատության կրճատմանը,

գ. զբաղվածության ընդլայնմանը,

դ. աշխատավարձերի իրական մեծությունների հայտարարագրմանը, քանի որ հարկ վճարողները աշխատավարձերի թերհայտարարագրման համար այլևս տնտեսական խթաններ չեն ունենա (ներկայումս աշխատավարձի և շահույթի հարկման դրույքաչափերի միջև առկա մեծ տարբերության պատճառով հարկ վճարողները հաճախ թերհայտարարագրում են աշխատավարձերը և փոխարենը ավելի մեծ չափով հարկվող շահույթ են հայտարարագրում):

Ընդ որում, եկամտային հարկի դրույքաչափերի վերանայման առաջարկությունը կատարվել է տարբեր եկամտային խմբերում գտնվող անձանց թվաքանակի ու եկամուտների բաշխվածության, ինչպես նաև հարկային վարչարարության վրա դրա ազդեցության մանրամասն վերլուծության արդյունքների հիման վրա:

Սկզբունք 4. հարկային արտոնություններն աստիճանաբար փոխարինվում են սուբսիդիաներով՝ այն դեպքում, երբ հնարավոր է դրանց թիրախավորված տրամադրումը կարիքավոր խավերին՝ փոխհատուցելով գների հնարավոր աճը: Սոցիալական, առողջապահական կամ կրթական ուղղվածություն ունեցող՝ ԱԱՀ-ից ազատման արտոնությունների վերացման հետևանքով հասարակության սոցիալապես խոցելի խմբերի մոտ սոցիալական լարվածություն չառաջացնելու, ինչպես նաև այդ խմբերին պետական աջակցությունն առավել արդյունավետ ու հասցեական ձևով կազմակերպելու նպատակով, առաջարկվում է սոցիալապես խոցելի խմբերում գտնվող և ԱԱՀ-ից ազատման որոշ արտոնություններից օգտվող անձանց պետական աջակցությունը կազմակերպել սուբսիդիաների տրամադրման միջոցով: Օրինակ, առողջապահական ծառայություններն ԱԱՀ-ով հարկելու պարագայում կարող է ընդլայնվել պետական պատվերի շրջանակներում անվճար բժշկական օգնություն ստացող անձանց շրջանակը կամ պետական պատվերի շրջանակներում մատուցվող բժշկական ծառայությունների շրջանակը, կամ կրթական ծառայություններն ԱԱՀ-ով հարկելու պարագայում կարող է ընդլայնվել պետական պատվերի շրջանակներում սովորող ուսանողների տեղերի թիվը կամ կարող են ընտրվել կոնկրետ մասնագիտություններ և դրանց ուղղությամբ մասնագետների պատրաստումն ամբողջությամբ կազմակերպել պետական պատվերի շրջանակներում:

Սկզբունք 5. առավել արդարացի հարկային համակարգ ձևավորելու նպատակով նեղացվում է հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության շրջանակը: Հարկային օրենսգրքի ներդրմամբ նախատեսվում է նկատելիորեն նեղացնել հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության շրջանակը՝ հետևյալ ուղղություններով.

- 1) ԱԱՀ-ի շեմի իջեցում՝ տարեկան իրացման շրջանառության 115 մլն. դրամից 40 մլն. դրամ,
- 2) հաստատագրված վճարների համակարգի վերացում:

Հարկային օրենսգրքի ներդրման փուլում հարկման այլընտրանքային համակարգերի, և հատկապես, շրջանառության հարկի համակարգի կիրառության շրջանակի նեղացումը շատ կարևորվում է, քանի որ շրջանառության հարկի 115 մլն. դրամի չափով շեմի կիրառությունը գործնականում նշանակում է, որ շուրջ 72 հազ. ակտիվ հարկ վճարողների մոտավորապես 90

տոկոսը գործելու է շրջանառության հարկի համակարգում: Այս մոտեցումը ընդունելի համարվել չի կարող, քանի որ եթե կարճաժամկետ հեռանկարում կամ անցումային որևէ ժամանակահատվածում շրջանառության հարկի բարձր շեմը կարող է որոշակիորեն հիմնավորված լինել, ապա երկարաժամկետ հեռանկարում այսպիսի բարձր շեմի կիրառությունը որևէ կերպ արդարացված չէ, ինչը հիմնավորվում է հետևյալ նկատառումներով.

ա. պետությունը չի կարող երկարաժամկետ հեռանկարում հարկային եկամուտների ապահովման ռազմավարությունը կապել շրջանառության հարկի համակարգում գործող հարկ վճարողների հետ,

բ. շրջանառության հարկի բարձր շեմի կիրառության պարագայում, ըստ էության, կիմաստազրկի հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվող այն բոլոր բարելավումները, որոնք առավելապես նախատեսված են հարկման ընդհանուր համակարգում գործող հարկ վճարողների համար,

գ. շրջանառության հարկի շեմը, ըստ էության, պետք է ծառայի միայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտների համար, և միայն այս խմբի հարկ վճարողները պետք է գործեն հարկման արտոնյալ պայմաններում, իսկ ՓՄՁ սուբյեկտները և մնացած ավելի խոշոր հարկ վճարողները պետք է գտնվել հարկման հավասար ու միատեսակ պայմաններում, քանի որ հարկային համակարգում անհավասարությունը ստեղծում է բարդ ու անլուծելի խնդիրներ, այդ թվում՝ կապված հարկումից խուսափելու ռիսկերի առաջացման հետ:

Բացի այդ, շրջանառության հարկի շեմը պետք է կիրառվի բացառապես առևտրային կազմակերպությունների համար, քանի որ շեմի կիրառության տրամաբանությունը համատեղելի չէ ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության հետ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հարկային օրենսգրքի նախագծի մշակման հիմքում դրված վերլուծական աշխատանքների շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունում բազմակողմանի վերլուծություններ են կատարվել նաև շրջանառության հարկի օպտիմալ շեմի որոշման ուղղությամբ: Այդ վերլուծությունների արդյունքներով հիմնավորվում է, որ երկարաժամկետ հեռանկարում շրջանառության հարկի օպտիմալ շեմը գնահատվում է առավելագույնը 40 մլն. դրամի չափով:

Սկզբունք 6. տնտեսության ստվերային շրջանառությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով խստացվելու են գործարքների և առանձին ապրանքների փաստաթղթավորման նկատմամբ պահանջներն ու հսկողությունը: Հարկային օրենսգրքի ներդրման շրջանակներում չափազանց կարևորվում է տնտեսությունում կատարվող գործարքների փաստաթղթավորման խնդրի լուծումը, առանց որի հնարավոր չէ հարկային համակարգում և տնտեսությունում ընդհանրապես իրականացնել լուրջ բարեփոխումներ: Մասնավորապես, փաստաթղթավորման ցածր մակարդակը՝

1) հնարավորություն չի ընձեռում պարզել իրական ՓՄՁ սուբյեկտներին և նրանց համար մշակել ու իրականացնել մեղմ հարկային քաղաքականություն և վարչարարություն, կիրառել աջակցության գործիքներ,

2) խոշոր տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռում թաքցնել հսկայական իրացման շրջանառություններ՝ դրանով իսկ հարկային բեռը տեղափոխելով փոքր հարկ վճարողների վրա,

3) շուկայում ստեղծում է անհավասար մրցակցային պայմաններ՝ դրանով իսկ ստվերային դաշտում գործող տնտեսավարող սուբյեկտների համար ապահովելով չհիմնավորված մրցակցային առավելություններ,

4) հանգեցնում է պետական բյուջեի հարկային եկամուտների կորստի, ինչի արդյունքում հնարավոր չի լինում իրականացնել հարկային միջավայրի բարելավմանն ուղղված առավել հավակնոտ միջոցառումներ:

Այլ կերպ ասած՝ փաստաթղթավորման խնդրի լուծումը պետք է լինի այն հիմնական հիմնադրույթը, որի հիման վրա պետք է իրականացվեն հարկային համակարգի բարեփոխումները: Հետևաբար, հարկային օրենսգրքի ներդրմամբ իրականացվելու են բոլոր անհրաժեշտ միջոցառումները տնտեսությունում կատարվող գործարքների փաստաթղթավորման նոր մշակույթ ներդնելու և մեր երկրում գործարքների փաստաթղթավորման խնդիրը հիմնովին լուծելու համար: Հիմնական սկզբունքը պետք է լինի խոշոր տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործարքների ամբողջական փաստաթղթավորումը, ինչը նախադրյալներ կստեղծի, որպեսզի տնտեսության հաջորդ օղակներում ավելի փոքր հարկ վճարողների կողմից իրականացվող գործարքները նույնպես փաստաթղթավորվեն: Այս իմաստով, փոքր և միջին հարկ վճարողները նույնպես անմասն չեն մնալու գործարքների փաստաթղթավորման պահանջի համատարած կիրառությունից:

Առանձնակի կարևորվելու է նաև դրոշմավորման ենթակա՝ լայն սպառման ապրանքների շրջանակի ընդլայնումը, քանի որ ապրանքների դրոշմավորման համակարգի կիրառության նախորդ տարիների փորձով հիմնավորվում է համակարգի կիրառության արդյունավետությունը ստվերային շրջանառությունների դեմ պայքարում:

Սկզբունք 7. հարկային կարգապահությունը բարձր մակարդակում պահելու համար աստիճանաբար կատարելագործվելու է հարկային վարչարարությունը: Շատ կարևոր է նաև, որպեսզի հարկային միջավայրի բարելավմանն ուղղված աշխատանքները զուգակցվեն նաև հարկ վճարողների հարկային կարգապահության մակարդակի բարձրացմամբ: Այս առումով, հարկային օրենսգրքի ներդրմամբ կատարելագործվելու են նաև հարկային հսկողության ու հարկային պարտավորությունների կատարումն ապահովող գործիքներն ու ընթացակարգերը: Մասնավորապես, հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է.

1) կարգավորել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների ու ուսումնասիրությունների հետ կապված հարաբերությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումները տեսչական գործառույթներ ունեցող այլ մարմինների կողմից իրականացվող ստուգումների համեմատությամբ ունեն բավական շատ տարբերություններ՝ կապված ստուգումների տեսակների, ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների

ընտրության ինքնաշխատ համակարգերի, ստուգումների ընթացակարգերի հետ՝ նախատեսվում է հարկային օրենսգրքի նախագծով առանձին կարգավորել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների հետ կապված հարաբերությունները: Հարկային հսկողական աշխատանքների կազմակերպման առումով սկզբունքը լինելու է առավելապես կամերալ ուսումնասիրությունների իրականացման միջոցով հարկային պարտավորությունների առաջադրումը՝ հնարավորին չափ կրճատելով հարկ վճարողների մոտ իրականացվող արտագնա ստուգումների թիվը: Այս առումով, վարչարարության սլաքը ուղղված է լինելու ոչ թե անմիջականորեն հարկ վճարողների մոտ հսկողական միջոցառումների իրականացմանը, այլ հարկային մարմնում իրականացվող վերլուծություններին ու գրասենյակային ուսումնասիրություններին:

2) կարգավորել հարկային մարմնի կողմից իրականացվող վարչական վարույթի հետ կապված առանձնահատուկ հարաբերությունները: Հարկային մարմնի կողմից իրականացվող վարչական վարույթը նույնպես ունի որոշակի առանձնահատկություններ: Այս առումով, հարկային օրենսգրքի նախագծով առաջարկվում է սահմանել հարկային մարմնի կողմից վարչական վարույթ հարուցելու, վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելու և հաշվառելու, ինչպես նաև վարչական ակտ կազմելու հետ կապված ընթացակարգերի առանձնահատկությունները:

3) առավել արդարացի դարձնել հարկային օրենսդրության պահանջների խախտման դեպքերում պատասխանատվության միջոցների կիրառությունը: Մասնավորապես, հարկային օրենսգրքով առաջարկվում է ամրագրել հարկային օրենսդրության պահանջները խախտելու դեպքերում պատասխանատվության միջոցների կիրառության հիմնարար սկզբունք, որի համաձայն, պատասխանատվություն պետք է կիրառվի բացառապես այն դեպքերում, երբ հարկային օրենսդրության պահանջների խախտման հետևանքով առկա է պետական բյուջե պակաս վճարված հարկի գումար, իսկ բոլոր այն դեպքերում, երբ հարկային օրենսդրության պահանջների խախտումները չեն հանգեցրել պետական բյուջե պակաս վճարված հարկի գումարների, պատասխանատվության միջոցների չեն կիրառվելու:

4) կատարելագործել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցները: Հարկային օրենսգրքի նախագծով նաև նախատեսվում է որոշակիորեն կատարելագործել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող առկա գործիքները, ինչպես նաև ներդնել այնպիսի նոր գործիքներ, ինչպիսիք են երաշխիքն ու երաշխավորությունը:

Սկզբունք 8. հարկ վճարողների սպասարկման մակարդակը բարելավելու համար ներդրվում են նոր համակարգեր ու գործիքներ: Հարկային օրենսգրքի ներդրմամբ նախատեսվում է էականորեն բարելավել նաև հարկ վճարողների սպասարկման մակարդակը, այդ թվում՝ ինչպես արդեն իսկ առկա ծառայությունների որակի բարձրացմամբ, այնպես էլ նոր ծառայությունների մատուցմամբ: Մասնավորապես, առաջարկվում է հետևյալը:

1) ներդնել միջազգային պրակտիկայում վերջին շրջանում լայն տարածում գտած՝ հորիզոնական մոնիտորինգի համակարգ: Այս համակարգի ներդրումը հարկ վճարողների և հարկային մարմնի միջև գործընկերային հարաբերությունների և փոխհամագործակցության բուրբուխն ուր մակարդակ է ենթադրում: Հորիզոնական մոնիտորինգի համակարգի շրջանակներում հարկ վճարողները կամավորության սկզբունքով հնարավորություն կստանան առավել ձկուն ընթացակարգերով և առավել ամբողջական տեղեկատվություն ստանալ տարբեր ոչ ստանդարտ հարկային իրավիճակներում հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի դրույթների կիրառության առանձնահատկությունների վերաբերյալ և դրանով իսկ՝ ունենալ առավել կանխատեսելի հարկային միջավայր:

2) ներդնել միասնական գանձապետական հաշվի համակարգ: Մասնավորապես, առաջարկվում է ներդնել պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվառման արմատապես նոր համակարգ՝ ներկայումս այդ նպատակով կիրառվող մի քանի տասնյակ գանձապետական հաշիվների փոխարեն կիրառելով ընդամենը մեկ՝ միասնական գանձապետական հաշիվ: Այս համակարգի հիմնական սկզբունքը և նորույթը կայանում է նրանում, որ հարկ վճարողների կողմից միասնական գանձապետական հաշվին վճարված գումարները դեռևս չեն համարվում պետական բյուջեի հարկային եկամուտներ, քանի դեռ հարկ վճարողը չի ներկայացրել հարկային պարտավորություն արտացոլող հարկային հաշվարկ: Հետևաբար, հարկ վճարողը մինչև հարկային հաշվարկների ներկայացումը կարող է փաստացի տնօրինել իր կողմից միասնական գանձապետական հաշվին վճարված գումարները, այդ թվում՝ հետ ստանալ: Հարկ վճարողի կողմից ներկայացվող հարկային հաշվարկների հիման վրա միասնական գանձապետական հաշվում առկա գումարներից համապատասխան հարկատեսակի գծով պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունը հաշվառող գանձապետական ենթահաշվին կատարվում են վճարումներ: Այս համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի լուծել մի շարք կարևոր ու համակարգային նշանակություն ունեցող խնդիրներ: Մասնավորապես, համակարգի ներդրման դեպքում՝

➤ վերանում է միասնական գանձապետական հաշվի վրա գերավճարներ կուտակելու հնարավորությունը, քանի որ դրանք այլևս չեն համարվելու հարկային եկամուտներ,

➤ կրճատվում է հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկների քանակը (ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հաշվարկների փոխարեն ներդրվում է մեկ միասնական՝ անուղղակի հարկերի հաշվարկ),

➤ հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների գծով պահված (գանձված) շահութահարկի գումարների վճարման ամսական պարբերականությունը փոխարինվում է կիսամյակայինով,

➤ ակցիզային դրոշմանիշերը և լայն սպառման ապրանքատեսակների համար նախատեսված դրոշմապիտակները հարկ վճարողներին տրամադրվելու են առանց կանխավճարների վճարման՝ դրանով իսկ հարկ վճարողներին հնարավորություն ընձեռելով առավել արդյունավետ

ծնով օգտագործել իրենց շրջանառու ֆինանսական միջոցները՝ դրանք չսառեցնելով որպես հարկերի գծով կանխավճարներ,

➤ հանվում են օրենքով սահմանված ժամկետներում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման կամ արտարժույթի փոխարկման գործարքները չգրանցելու դեպքերում նախատեսված տուգանքները չվճարելու դեպքում դրանց կրկնապատկման դրույթները,

➤ վերանում է մեկ հարկատեսակից մեկ այլ հարկատեսակին հաշվանցում կատարելու և դրանից բխող անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտությունը (դիմումների ներկայացումը, եզրակացությունների կազմումը և այլն), կրճատվում են հարկ վճարողների կողմից վճարված հարկերի հաշվանցման և վերադարձման ժամկետները, արմատապես պարզեցվում են գործող ընթացակարգերը,

➤ նույնականացվում են բոլոր հարկատեսակների և վճարների գծով հարկային հաշվարկների ներկայացման և հարկային պարտավորությունների կատարման ժամկետները,

➤ վերանում է մեկ հարկատեսակի գծով նախատեսված հաշվի փոխարեն մեկ այլ հարկատեսակի համար նախատեսված հաշվին սխալ վճարումներ կատարելու և դրա հետևանքով տույժերի ենթարկվելու հավանականությունը,

➤ կարգավորվում են ԱԱՀ-ով հարկման ժամանակաշրջանում կուտակված դեբետային մնացորդների գումարները հարկման այլ դաշտում գտնվելու ժամանակաշրջանում հաշվանցելու հետ կապված հարցերը:

Այս ամենի արդյունքում հնարավորություն է ստեղծվում հարկ վճարողների անձնական հաշվի քարտը վարել բացառապես էլեկտրոնային եղանակով՝ միաժամանակ հարկ վճարողին հնարավորություն ընձեռելով առանց հարկային մարմին այցելելու իրական ժամանակում հետևել իր անձնական հաշվի քարտի շարժին ու մնացորդներին: Բացի այդ, հնարավորություն է ստեղծվում հարկ վճարողի հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքը գեներացնել էլեկտրոնային եղանակով՝ բոլոր այն դեպքերի համար, երբ օրենսդրությամբ նախատեսված է այդ տեղեկանքը պետական կամ այլ մարմիններին ներկայացնելու պահանջ (օրինակ, պետական գնումների շրջանակներում մրթույթների մասնակցելու դեպքերում):

3) կատարելագործել հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին պարզաբանումների տրամադրման ընթացակարգերը: Հարկային օրենսգրքի նախագծի շրջանակներում քննարկվում է հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին պարզաբանումների տրամադրման նոր՝ միջազգային պրակտիկայում կիրառվող մեկ այլ գործիքի՝ Tax ruling-ի ներդրման հնարավորությունը և պարզաբանումների ու իրազեկումների տրամադրման նպատակով ներկայումս կիրառվող այլ գործիքների հետ դրա կիրառությունը զուգակցելու նպատակահարմարությունը.

4) կատարելագործել հարկ վճարողներին տարբեր հիշեցում-ծանուցումների ուղարկման համակարգը: Հարկային օրենսգրքի ներդրումն ապահովող ծրագրային աշխատանքների շրջանակներում նախատեսվում է կատարելագործել նաև հարկ վճարողներին տարբեր

հարցերով հիշեցում-ծանուցումների ուղարկման համակարգը՝ դրանով իսկ կանխարգելելով հարկ վճարողների կողմից հարկային օրենսդրության պահանջների խախտումներն ու նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառությունը:

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԵՏԱԳԱ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Հարկային օրենսգրքի նախագիծը լայնորեն քննարկվելու է ինչպես գործարար միջավայրի, այնպես էլ ոլորտի մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների հետ: Այս առումով, ՀՀ ֆինանսների նախարարությունը նախատեսում է նախարարության ներքո ստեղծված հարկային խորհրդի շրջանակներում, ինչպես նաև այլ ձևաչափերով հարկային օրենսգրքի նախագիծը լայնորեն քննարկել բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Հարկային օրենսգրքի նախագիծը տեղադրված է ՀՀ ֆինանսների նախարարության՝ հետևյալ հասցեներով գործող պաշտոնական կայք-էջերում՝ www.minfin.am, www.taxservice.am, և նախագծի վերաբերյալ առաջարկությունների առկայության դեպքում դրանք կարող են ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Նախատեսվում է, որ հարկային օրենսգրքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը կներկայացվի 2016 թվականի գարնանը:

Հարկային օրենսգրքի գործողությունը նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից: